Որակի Քաղաքականություն

«Էրեբունի» Բժշկական Կենտրոն

Կոդ՝ QM-PL-01

«Էրեբունի» Բժշկական Կենտրոնի բարձր ղեկավարությունը հաստատակամ է խթանել առողջապահական խնամքի որակի շարունակական բարելավումը Բժշկական Կենտրոնում և Հայաստանի Հանրապետության առողջապահական ոլորտում: Կենտրոնում մենք պարտավորվում ենք մատուցել բացառիկ առողջապահական ծառայություններ՝ առաջնահերթություն տալով հիվանդի անվտանգությանը, նրանց բավարարվածությանը և շարունակական բարելավմանը:

Մենք պարտավորվում ենք պահպանել որակի և անվտանգության ամենաբարձր չափանիշները մեր գործունեության բոլոր ասպեկտներում, ներդրումներ իրականացնելով անձնակազմի շարունակական վերապատրաստման և մասնագիտական զարգացման մեջ: Մեր մասնագետները հավատարիմ են վարակների կանխարգելման, ռիսկերի և վտանգների կառավարման, ինչպես նաև ապացուցողական բժշկության վրա հիմնված մոտեցումներին:

Մեր քաղաքականությունը, գործընթացները և ծառայությունները նախագծված են պացիենտների անվտանգության, հարմարավետության և բարեկեցության համար՝ միաժամանակ հարգելով նրանց իրավունքները, արժանապատվությունը և գաղտնիությունը: Բժշկական Կենտրոնում առողջապահական խնամքը տրամադրում է առանց խտրականության:

«Էրեբունի» Բժշկական Կենտրոնը հավատարիմ է JCI կողմից մշակված Պացիենտների անվտանգության միջազգային նպատակներին.

- **Նպատակ 1.** Ճիշտ նույնականացնել պացիենտներին:
- **Նպատակ 2.** Բարելավել արդյունավետ հաղորդակցությունը:
- **Նպատակ 3.** Բարելավել հատուկ ուշադրություն պահանջող դեղերի (high-alert medications) անվտանգությունը:
- **Նպատակ 4.** Ապահովել անվտանգ վիրահատություն:
- **Նպատակ 5.** Նվազեցնել առողջապահության հետ կապված վարակների ռիսկը:
- **Նպատակ 6.** Նվազեցնել ընկնելու հետևանքով պացիենտի վնասվելու ռիսկը:

Մեր կառավարման համակարգը հիմնված է որակի կառավարման ISO 9001:2015 և հավատարմագրման JCI միջազգային ստանդարտների չափանիշների հիման վրա: